Դավիթ Գյուրջինյան

# Մայրենի 5

## Աշխատանքային տետր 1

Երևան 2012

**1.** ա) Սկսելով ներս մտնող սլաքից՝ շարժվի՛ր գծերի ուղղությամբ և կարդա՛ ասույթը:




բ) Ասույթը գրի՛ր այստեղ:

______________________________

______________________________

______________________________



*Վիկտոր Համբարձումյան*

գ) 1-2 նախադասությամբ գրի՛ր, թե ի՞նչ գիտես այս ասույթի հեղինակի մասին:



______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

**2.** Տրված բառերից ընտրի՛ր և մատիտով լրացրո՛ւ Եղիշե Չարենցի «Մեր լեզուն» բանաստեղծության առաջին քառատողի բաց թողնվածները:

Պայծառ, փարոս, հին:

Հուշում. *Քեզ կօգնեն տողավերջի բառերի* ***թավ գրված*** *մասերը:*

*Մեր լեզուն ճկուն է ու բարբար**ոս**,*
*Առնական է, կոպիտ, բայց միևնույն պահ**ին***
*............ է նա, որպես մշտարթուն ............,*
*Վառված հրով անշեջ դարերում ..............:*

Այստեղ գրի՛ր ճշտված և մաքուր տարբերակը:

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

**3.** Նախադասությունների մեջ լրացրո՛ւ բաց թողնված բառը:

**ա)** Այբուբեն *բառը կազմված է հայերենի առաջին երկու տառերի անվանումներից՝ ......... (ա) և ......... (բ):*

**բ)** *Հայոց գրերը 405 թվականին ստեղծել է ........................................ ........................................ը: Նա թաղված է Արագածոտնի մարզի ........................................ գյուղում:*

**գ)** *Հայ գրերի արարիչն ստեղծել է ........... տառ՝* **ա**-*ից մինչև* **ք**:

**դ)** *Հայերենի այբուբենի վերջին երկու տառերը՝ .........-ն և .......-ն, ավելացել են միջին դարերում:*

**ե)** *Հայերենն ունի 6 ........................................ և 30 բաղաձայն հնչյուններ:*

**4.** Տրված նախադասության մեջ ճիշտ բառը լրացնելու համար անջատի՛ր՝

- [illegible]. գրական *բառերի առաջին բաղադրիչները.*
- [illegible]. ջրատար *բառերի արմատներն իրար միացնող մասնիկը.*
- [illegible]. եղբայրաբար *բառերի վերջածանցները:*

*Հին հայերենը, որով հայերը խոսել են 5-11-րդ դարերում, կոչվում է ......................:*

**5.** Նույն գույնի պարկերի վրա գրված բառերը դասավորելով՝ կարդա՛ հայկական առածները, ապա գրի՛ առ:




______________________________________________________________

______________________________________________________________

**6.** Կարդա՛ հայոց լեզվի մասին ասույթները: Գրի՛ր, թե ի՛նչ գիտես դրանց հեղինակների մասին:



**Նմուշ՝** *Մայրենի լեզուն մարդու հետ է միշտ, նույնիսկ երբ մարդ բոլորովին մենակ է:*

*Լեոն Շանթ*

**Լեոն Շանթը** հայ նշանավոր գրող է, մանկավարժ: Նա հայերենի դասագիրք էլ է գրել:



*Մայրենի լեզվի բառերը մենք զգում ենք, իսկ օտար լեզվինը՝ հասկանում, սովորում, հիշում:*

*Ավետիք Իսահակյան*

________________________________________________

________________________________________________

________________________________________________



*Լեզուն ամենազորեղ զենքն է, որովհետև նա մարդուն միացնում է մյուս մարդկանց հետ:*

*Վահան Տերյան*

________________________________________________

________________________________________________

________________________________________________



*Իր մայրենի լեզուն վատ իմացողը կես մարդ է, չիմացողը՝ թշվառ, ծառից ընկած մի տերև, որ տարվում է ամեն մի պատահական քամուց:*

*Ստեփան Զորյան*

________________________________________________

________________________________________________

________________________________________________

7. Տարբեր տեղերում դու հաճախ տեսնում ես այս պայմանական նշանները: Դրանք ի՞նչ են նշանակում:












8. Գրի՛ր նկարներում պատկերված առարկաների անունները: Հաշվի՛ր, թե քանի՛ հնչյունից քանի՛սն է ձայնավոր:

Նմուշ՝ ***առագաստանավ - 11 հնչյուն, 5 ձայնավոր (11/4):***






**9.** Լրացրո՛ւ աղյուսակի պակասող բաղաձայնները:

| | | |
|---|---|---|
| *բ* - □ - *փ* | *գ* - □ | *լ* |
| *գ* - *կ* - □ | *ժ* - □ | *մ* |
| □ - *պ* - *թ* | □ - *խ* | □ |
| □ - *ծ* - □ | *վ* - □ | *ր* |
| *չ* - □ - □ | *հ* | □ □ |

**10.** Լրացրո՛ւ պակասող բաղաձայնները:

*ա) մարդ - __արդ, __արդ, __արդ, __արդ, __արդ, __արդ*

*բ) մարդ - մար__ - մար__*

*գ) լոր - __որ, __որ, __որ, __որ, __որ, __որ, __որ, __որ*

*դ) հավ - հա__, հա__, հա__, հա__, հա__*

**11.** Մեկ բաղաձայնով տարբերվո՛ղ բառե՛ր գրիր:

*ա)* ______________________________

*բ)* ______________________________

*գ)* ______________________________

*դ)* ______________________________

**12.** Մեկ բաղաձայնով տարբերվող բառեր օգտագործելով՝ զվարճալի նախադասությունննե՛ր կազմիր:

Նմուշ՝ ***Վարդի վրա մարդը մի սարդ տեսավ, դեղին ներկեց ու զարդ սարքեց:***

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

**13.** Լրացրո՛ւ պակասող ձայնավորները: Նման բառեր ի՛նքդ գտիր:

*ա) սար - ս__ր - ս__ր* *ե)* ______________________

*բ) կեր - կ__ր - կ__ր - կ__ր* *զ)* ______________________

*գ) ծառ - ծ__ռ - ծ__ռ* *է)* ______________________

*դ) բարդ - բ__րդ - բ__րդ* *ը)* ______________________

**14.** Մեկ ձայնավորով տարբերվող բառեր օգտագործելով՝ անհավանական մի պատմությու՛ն հորինիր: Փորձի՛ր նկարազարդել կամ գունավորել շարադրանքը:

**15.** Գրականություն բառի տառերն օգտագործելով՝ բառե՛ր կազմիր:

**Նմուշ՝** համերկրացի - կար, երկիր, մեկ, այն, հարկ *և այլն:*

**16.** ա) Լրացրո՛ւ պակասող ձայնավորները:







դ_րպ_ս_պ_հ լ_ղ_րդ բռնցք_մ_րտ_կ







մ_րմն_մ_րզ_կ դ_հ_կ_րդ հ_ծ_նվ_րդ





ծ_նր_մ_րտ_կ _մբշ_մ_րտ_կ

բ) Յուրաքանչյուր տողից մեկական բա՛ռ ընտրիր և գործածի՛ր նախադասությունների մեջ:

**17. Լամպ** բառի տառերից յուրաքանչյուրով սկսվող բառե՛ր գրի՛ր:

*լ* - ____________________

*ա* - ____________________

*մ* - ____________________

*պ* - ____________________

**18.** Բառե՛ր գրի՛ր, որոնք վերջանան **կամք բառի** տառերով:

*կ* - ____________________

*ա* - ____________________

*մ* - ____________________

*ք* - ____________________

**19.** ա) Տրված գծապատկերներին համապատասխան բառե՛ր գրի՛ր. կարմիր վանդակների տեղում ձայնավոր է, սևերի տեղում՝ բաղաձայն:

բ) Ձայնավորներն ընդգծի՛ր կարմիր գրիչով:

 ____________________

 ____________________

 ____________________

 ____________________

**20.** Բառե՛ր գրի՛ր, որոնք սկսվում և վերջանում են՝

ա) նույն ձայնավորով:

____________________

բ) նույն բաղաձայնով:

____________________

**21.** ա) Լրացրո՛ւ պակասող բաղաձայնները:



ու _ ու _ ի _



_ ի _ կ



օ _ ա _ ու



_ ա __ ի _



_ ա _ ո __



ո __ ա _ ի _



_ ա _ ա _ ո _



ո __ ի _ ա _



_ ե __ ա _

բ) Յուրաքանչյուր շարքից մեկ բա՛ռ ընտրիր և գործածի՛ր նախադասությունների մեջ:

______________________________

______________________________

______________________________

**22.** Գրի՛ր կապույտ գրված տառի անունը, գումարի՛ր սև տառը և կարդա՛ բառը:

**Նմուշ՝** ծ+*ռ* = *ծառ*

*ա)* ն+*շ* = …………  *դ)* չ+*ր* = ……………

*բ)* դ+*ր* = …………  *ե)* հ+*ղ* = ……………

*գ)* կ+*պ* = …………  *զ)* ս+*խ* = ……………

**23.** Գրի՛ր կարմիր գրված տառերի անունները, գումարի՛ր սև գրված տառը և կարդա՛ բառը:

*ա)* ց+ր+*ն* = ………………  *բ)* ք+*շ*+*կ* = ………………

**24.** Հանելուկների պատասխանները լրացրո՛ւ համապատասխան վանդակներում: Ո՞ր բառի երկհնչյունն է մյուսներից տարբեր:

1. *Ծնվում եմ ջրից, ճերմակ թև առնում,*
*Քո շնչից անգամ նորից ջուր դառնում:*
2. *Ամեն առավոտ ես վաղ արթնանում,*
*Գիրք, տետր ու գրիչ նրա մեջ դնում,*
*Դպրոց եմ տանում:*
3. *Մրգերից ենք մենք այն քամում,*
*Քաղցր ու համեղ անուշ անում:*
4. *Կանաչ կեղև ունեմ ես,*
*Կլորիկ եմ գնդի պես,*
*Պինդ պատյանս թե կոտրես,*
*Համեղ միջուկ կգտնես:*
5. *Փափկամազիկ այդ կենդանին*
*Շատ է սիրում սունկ, սերմ ու կոն,*
*Նրան երբեք իր փչակում*
*Հանգիստ նստած մենք չենք տեսնում:*



**25.** Յուրաքանչյուր երկհնչյունի դիմաց այդ երկհնչյունն ունեցող 2-ական բա՛ռ գրի՛ր: Երկհնչյուններն ընդգծի՛ր:

**այ** - ______________________________

**յա** - ______________________________

**ույ** - ______________________________

**յու**- ______________________________

**ոյ** - ______________________________

**յո** - ______________________________

**եյ** - ______________________________

**ե** *(կարդացվում է յէ)* - ______________________________

**յի** - ______________________________

**26.** Յուրաքանչյուր նկարի դիմաց գրի՛ր համապատասխան (բառը բոլորն էլ սկսվում են **ե**-ով): Գրած բառերը գործածի՛ր 1-ական նախադասության մեջ:











**27.** Լրացրո՛ւ տառերը և շրջանակի մե՛ջ վերցրու այն բառի համարաթիվը, որտեղ բաց թողնված տեղում **և** է գրվում.

1. *մանր__*
2. *միջօր__ ական*
3. *ան__անալ*
4. *երբև__*
5. *առ__ջ*

1. *վայր__ջք*
2. *որևից__*
3. *ինչև__*
4. *ելև__ ջ*
5. *հն__արան*

**28.** Նույն գույնո՛վ ներկիր բառերն ու նրանց իմաստները:

*միասին, միաժամանակ ծնված երեխաներ*

*երամ*

*երախտագետ*

*երամակ*

*ձիերի խումբ*

*երկկենցաղ*

*թռչունների խումբ*

*և՛ ջրում, և՛ ցամաքում ապրող կենդանի*

*երկվորյակ*

*լավությունը գնահատող*

**29.** ա) Լրացրո՛ւ բաց թողնված տառերը: Ո՞ր շարքի բոլոր դեպքերում է **է** գրվում: Ճիշտ պատասխանի շրջանակը ներկի՛ր:

- O *որև__, ինչևից__, էլեկտրա__ներգիա*
- O *միջօր__, առօր__ական, չ__ն քնում*
- O *չ__մ զիջնում, կ__ժանանա, չ__*
- O *չ__ր դավաճանի, ճկարիչ չ__, երբև__*

բ) Գրի՛ր այն բառերը, որոնց բաց թողնված տեղում **և** է գրվում:

---

**30.** Ինչպե՞ս է արտասանվում կարմիր գրված ե-ն: Ճիշտ պատասխանը շրջանակի մե՛ջ վերցրու:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| *Լայնեզր* | *է* | *յէ* | *մեներգ* | *է* | *յէ* |
| *վերելք* | *է* | *յէ* | *պեսաերիզ* | *է* | *յէ* |
| *կիսաեփ* | *է* | *յէ* | *ռնգեղջյուր* | *է* | *յէ* |

**31.** Ի՞նչ է պատկերված նկարներում: Այդ բառերը գործածի՛ր 1-ական նախադասության մեջ՝ ընդգծելով **օ** կամ **ո** տառերը::















**32.** Հոմանիշ բառերը սլաքներով իրա՛ր միացրու.

| | |
|---|---|
| *երազ* | *վախենալ* |
| *երկյուղել* | *արարել* |
| *երախտագետ* | *ապերախտ* |
| *ենթարկվել* | *անուրջ* |
| *երկնել* | *շնորհակալ* |
| *երախտամոռ* | *հպատակվել* |

**33.** Տրված տառերն աջից ձախ կարդալով՝ գրի՛ր բառը.

*խաղողի վազ* **թրո** ____________________

*արջի բույն* **ջրո** ____________________

*ծառի, թփի բարակ ճյուղ* **տսո** ____________________

**34.** Խառնված վանկերը դասավորելով գրի՛ր համապատասխան բառը.

*գայլերի խումբ* **մակոհ** ____________________

*դեղին գույնի ազնիվ մետաղ* **կիոս** ____________________

*ջրել, հոսելով ջուր մատակարարել* **ոռգելո** ____________________

*Նոր տարի* **Անորմա** ____________________

**35.** ա) Լրացրո՛ւ բաց թողնված տառերը: Ո՞ր շարքի բոլոր բառերում է օ գրվում: Ճիշտ պատասխանի շրջանակը ներկի՛ր:

O *մեղմ__րոր, մեղմ__րեն, ան__գուտ*

O *միջ__րե, տն__րեն, ան__րեն*

O *ապ__րինի, Աման__ր, ՆԱՏ__*

բ) Գրի՛ր այն բառերը, որոնք օ-ով չեն գրվում:

________________________________________________

________________________________________________

**36.** Ըստ գույների գտի՛ր տրված իմաստներն արտահայտող բառերը (բոլորն էլ սկսվում են օ-ով) և վանդակները ներկի՛ր համապատասխան գույնով:

*վերնաշապիկի կամ վերարկուի մաս*

*գիշերելու տեղ, տուն*

*չամուսնացած աղջիկ*

*երաժշտական-թատերական ստեղծագործություն*

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ո | մ | ի | գ | ա | օ | թ | և | ա | ն |
| ս | ե | ր | օ | պ | ե | ր | ա | գ | ա |
| | չ | ա | ր | ա | կ | օ | ր | վ | ի |
| ա | կ | օ | ձ | ի | ք | ա | պ | ք | ե |
| ն | օ | ր | ի | ո | ր | դ | ո | ս | պ |

**37.** Լրացրո՛ւ բաց թողնված տառերը: Ո՞ր շարքի բոլոր բառերում է **ո** գրվում: Ճիշտ պատասխանի շրջանակը ներկի՛ր:

O *օր__րոց, ոսկեզ__ծել, վառ__րոք*

O *նախ__րոք, ամեն__րյա, բաց__թյա*

O *աման__րյա, երկվ__րյակ, սև__րակ*

**38.** Ըստ գույների կարդա՛ բառակապակցությունները և գրի՛ առ:

*մարտանի* *հանգիստ* [illegible] [illegible]

[illegible] *նորանոր* *ոսկյա* *բացօթյա*

---

---

**39.** Ի՞նչ է պատկերված նկարներում: Այդ բառերը գործածի՛ր I-ական նախադասության մեջ:













**40.** Ինչպե՞ս է արտասանվում կարմիր գրված տառը: Ճիշտ պատասխանը շրջանակի մե՛ջ վերցրու:

| | | |
|---|---|---|
| *Բարձրորակ* | *վօ* | *օ* |
| *նորաձև* | *վօ* | *օ* |
| *ծնկոսկր* | *վօ* | *օ* |
| *կողմնորոշվել* | *վօ* | *օ* |
| *կորոշի* | *վօ* | *օ* |
| *չորսաց* | *վօ* | *օ* |

**41.** Բարձրաձայն կարդա՛ այս բառերը և ասա՛, թե ը-ն որտե՞ղ է լսվում: Այդ տեղում փոքրիկ ը գրի՛ր:

Նմուշ՝ ***օ ր ե ր^(ը) ա:***

*Պղղնի, առայժմ, զրնգել, թաքնվել, ցեռնոցու, դռնփակ, ցկնկիթ, խնդրագիրքդ, սկսել, գրադարակս, վերջերս:*

**42.** Կարդա՛ հեքիաթը. որոշի՛ր, թե ո՞ր ծառի մասին է այն: Բաց թողած տեղերում գրի՛ր ծառի կամ պտուղի անունը:

Հուշում. Նախ կարդա՛ մինչև վերջ, ապա լրացրո՛ւ:

*Այգու ծայրին լուռ ու հպարտ կանգնած էր խոշոր, փետրաձև տերևներով ..............................: Մյուս ծառերը թեպետ նրանից հեռու էին բնակվում, բայց նրա անպակաս հյուրերն էին, քանի որ նա լավ ունկնդիր էր: Խոսում էր հազվադեպ, կարծես իր լռությամբ, իր կանաչ աչք-պտուղներով կլանում էր դիմացինի մեջ եղածը: Որոշ ծառեր նրանից հեռու էին մնում ու չարախոսում, թե նրա պտուղները պիտանի չեն: Նա անտարբեր լսում էր ու լսում:*

*Եկավ ժամանակը, և այգին բացեց իր սեղանն Աշնան առաջ: Բոլոր ծառերի պտուղներն էլ համեղ էին, իսկ բոլորի համն իր մեջ առածն ու նաև ամենայուղալին ու սննդարարը .......................... պտուղն էր, որ դարձավ Աշնան սեղանի զարդը:*

*Աշունը .......................... նվիրեց փայլուն դարչնագույն փոքրիկ վուփիկներ նրա համեղ պտուղների համար, որ դրանք երկար մնան ու զարդարեն սեղանները տարվա բոլոր եղանակներին:*

*Այդ ժամանակից ի վեր .................... փռնակյան սեղանների զարդն է դարձել:*

*(ըստ Սիրանուշ Բուլաթյանի)*

**43.** Գրի՛ր, թե ինչպե՛ս պետք է արտասանել կարմիր գրված տառը.

*ա) խաղատն ( ), անորակ ( ), չարորակ ( ), սարդոստայն ( ), չոչնչացնել ( ).*

*բ) զուգերգ ( ), տասներկու ( ), աներեր ( ), զարկերակ ( ), հարյուր երկու ( ):*

**44.** ա) Որտեղ անհրաժեշտ է, լրացրո՛ւ ը տառը: Ո՞ր շարքի բոլոր բառերում է ը գրվում: Ճիշտ պատասխանի շրջանակը ներկի՛ր:

O *հյուր__նկալ, շր__խկ, անակ__նկալ*

O *ար__նթաց, խոչ__նդոտել, ինքն__ափինքյան*

O *ան__նդունելի, ակ__նհայտ, լուս__նկա*

O *հայր__նիքը, ճեպ__նթաց, ակ__նդետ*

O *մակ__նթացություն, համ__նկնել, օր__ստօրե*

O *առ__նթեր, զուգ__նթաց, ան__սպասելի*

բ) Գրի՛ր այն բառերը, որոնցում ը չի գրվում:

______________________________________________

______________________________________________

**45.** Յուրաքանչյուր բառի դիմաց գրվածներից միայն մեկն է հոմանիշ տրվածին: Հոմանիշ բառի շրջանակը ներկի՛ր:

*ա) նահանջել* — O *ընկճել* / O *ընկրկել*

*գ) հասկանալ* — O *ըմբռնել* / O *ընծայել*

*բ) թմրել* — O *ընդարմանալ* / O *ընկղմել*

*դ) նվիրել* — O *ըմբոշխնել* / O *ընծայել*

**46.** Ըստ գույների կարդա՛ բառակապակցությունները և գրի՛ առ:

[redacted] *ընկույզով* [redacted] *ազնիվ*

[redacted] [redacted] [redacted] *մուրաբա*

*օրըստօրե* *ավելանալ*

______________________________________________

______________________________________________

______________________________________________

**47.** Ըստ զույգերի գտի՛ր տրված իմաստներն արտահայտող բառերը (բառասկզբում կամ բառամիջում ը ունեն): Բառերը փնտրի՛ր տարբեր ուղղություններով՝ աջ, ձախ, վերև, ներքև:

*գիրք, որի մեջ ընթերցանության նյութեր են զետեղված,գիրք, որի մեջ հայր-հայր ընտրված ստեղծագործություններ են զետեղված, երեկոյան ճաշ, ծառի բարակ ճյուղ, պոչով փոքրիկ բաժակ՝ ումպ-ումպ կոնյակ և այլ թունդ խմիչք խմելու համար*

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| կ | լ | պ | ս | ը | ս | կ | ա | կ | գ | ա | մ |
| ա | ա | ու | դ | ն | յ | խ | շ | ի | վ | գ | ք |
| ն | դ | ա | լ | տ | ա | տ | ե | ն | օ | ր | դ |
| ա | ը | ն | թ | ր | ի | ք | ֆ | ց | յ | լ | ա |
| պ | ն | ա | ր | ա | ց | ր | ե | թ | ն | ը | գ |
| մ | կ | ու | լ | ն | ո | դ | մ | ա | շ | ե | ն |
| ը | ե | գ | տ | ի | դ | ը | ն | ջ | յ | ու | դ |

**48.** Յուրաքանչյուր նկարի դիմաց գրի՛ր համապատասխան բառը՝ ընտրելով բառաշղթայից: Ընդգծի՛ր երկհնչյունը: Այդ բառերը գործածի՛ր մեկական նախադասության մեջ:

*խարույկկողմնացույցսյունխոյակպատյանհեռուպացույց*













**49.** Քանի՞ հնչյունից են բաղկացած հետևյալ բառերը: Ինչո՞ւ որոշ բառերում տառերի և հնչյունների թիվը տարբեր է:

*Հայերեն -     , որդի -     , երիտասարդ -     , գլուխ -     , խաղաղություն -     , երկու -     , ձայնավոր -     , սյունազարդ -     , մղկպալ -     , դպրոցական -     , կշեռք -     :*

**50.** Յուրաքանչյուր նկարի տակ գրի՛ր, թե ի՛նչ է պատկերված: Կարմի՛ր ներկիր այն բառերի շրջանակները, որոնց տառերի և հնչյունների քանակը չի համապատասխանում:













**51.** Ո՞ր երկհնչյունն է գրվում: Ճիշտ պատասխանը շրջանակի մեջ վերցրու: Տողի վրա գրի՛ր տրված բառով բառակապակցություն:

**Հուշում.** ***Քեզ կօգնեն հետևյալ բառերը՝*** *ալյումինեղեն, չելի, խաղող, փորիկ:*

ա) *ընկ* _ *զ* — ույ / յու — ընկույզի միջուկ

բ) *ոսպ* _ *ն* — ույ / յու — ____________

գ) *շարաս* _ *ն* — ույ / յու — ____________

դ) *դաշ* _ *ն* — ույ / յու — ____________

ե) *ողկ* _ *զ* — ույ / յու — ____________

**52.** Բառաշղթայից առանձնացրո՛ւ և դեմ դիմաց գրի՛ր նույն գույնն ունեցող հոմանիշ բառերը: Ընդգծի՛ր երկհնչյունները:

*միմյանցկերուխումքահեկխնդույթիրարակայն*

*երկրատարդ բայցհիքառույգնադրոնաշխույժ*

________________________________________

________________________________________

________________________________________

________________________________________

________________________________________

________________________________________

**53.** Բառերի այս խառնաշփոթից ըստ գույների գտի՛ր հականիշների զույգերը և գրի՛ առ: Ընդգծի՛ր երկհնչյունները:

[illegible] *հարավային* *աղոտ* *միագույն*

*արևմտյան* [illegible] [illegible] [illegible]

[illegible] [illegible] *պայծառ* *հյուսիսային*

*արևելյան* [illegible] *խայտաբղետ* [illegible]

**54.** Տրված բառերից -յա մասնիկով բառե՛ր կազմիր: Յուրաքանչյուրի դիմաց գրի՛ր, թե ի՛նչը կարող է այդ նյութից պատրաստված լինել:

Նմուշ՝ ***արծաթ - արծաթյա մատանի, գդալ, բաժակ:***

*փայտ*

*ոսկի*

*ապակի*

*մետաղ*

*բամբակ*

*բուրդ*

**55.** Աղյուսակը լրացրո՛ւ երկհնչյուններ ունեցող անձնանուններով:

| *Աղջկա անուններ* | *Տղայի անուններ* |
| --- | --- |
| | |
| | |
| | |
| | |
| | |

**56.** Տրված արմատներով երկուական բառ կազմի՛ր:

**Նմուշ՝** ***սույզ - սուզվել, սուզակ, ջրասույզ, երկնասույզ:***

*Բույժ* ____________________

*բույծ* ____________________

*բույս* ____________________

*գույն* ____________________

*լույս* ____________________

*ցույց* ____________________

**57.** Շրջանակների մեջ գրի՛ր, թե ի՞նչ մրգահյութ ես նախընտրում:



**58.** Տրված անունները տեղադրի՛ր համապատասխան սյունակներում:

*Անգլիա, Սոֆիա, Ֆրանսիա, Բուլղարիա, Գերմանիա, Ալեքսանդրիա, Իտալիա, Սեբաստիա, Հունգարիա, Կեսարիա, Իսպանիա, Ֆիլադելֆիա, Ռումինիա, Եդեսիա, Մալաթիա:*

| *Երկրի անուն* | *Քաղաքի անուն* |
|---|---|
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |

**59.** Յուրաքանչյուր շարքում ընդգծի՛ր այն 5 բառերը, որոնց մեջ գրվող **բ**-ն հնչում է **բ**:

- *Աբել, խաբել, իբրև, փարբեր, հարբուխ, թամբել, համբույր, զամբյուղ, համբերել, սրբիչ:*
- *Փամբակ, նուրբ, երբեք, բամբակ, դարբին, ամբողջ, բամբուկ, փաբար, որբանոց, ուրբաթ:*
- *Համբարձում, երբեմն, հարբել, բորբոքել, բրդուճ, Սերբիա, նրբանցք, բորբ, սուրբ, բարբառ:*

**60.** Ինչպե՞ս է արտասանվում կարմիր գրված **բ**-ն: Ճիշտ պատասխանը շրջանակի մե՛ջ առ:

| | | | |
|---|---|---|---|
| *Հակոբ* | *բ* | *պ* | *փ* |
| *արբանյակ* | *բ* | *պ* | *փ* |
| *նրբահամ* | *բ* | *պ* | *փ* |
| *շաբաթ* | *բ* | *պ* | *փ* |
| *համբուրել* | *բ* | *պ* | *փ* |
| *բարբարոս* | *բ* | *պ* | *փ* |

**61.** Սլաքներով իրա՛ր կապիր բառերը և նրանց իմաստները:

| | |
|---|---|
| *Երփներանգ* | *ուժգին ցանկություն* |
| *արփի* | *գույն-գույն* |
| *բորբ* | *շատ վառ, ջերմ* |
| *փափագ* | *նեխել, փչանալ* |
| *շամփուր* | *շփանալ, երես առնել* |
| *հղփանալ* | *խորովածի շիշ* |
| *բորբոսնել* | *ցերեկային լուսատու* |

**62.** Տրված բառերից առանձնացրո՛ւ առաջին բաղադրիչները և վերականգնի՛ր նրանց սկզբնական ձևերը:

**Նմուշ՝ *փրփրել - փրփուր:***

*նրբակազմ* ______________ *դարբնոց* ______________

*համբուրել* ______________ *սրբազան* ______________

*եղբորորդի* ______________ *ճամփորդ* ______________

**63.** Ընդգծի՛ր այն 5 բառերը, որոնց մեջ գ-ն հնչում է **կ**:

- *Վագր, ոգևորել, զույգ, անօգուտ, երանգավորել, արևածագ, զուգահեռ, ուրագ, ձգնել, թագ:*
- *Հոգի, ճգնաժամ, մեգ, փափագ, անգամ, եղեգ, սգավոր, մարգ, մեներգ, սիրամարգ:*

**64.** Տրված արմատով կազմված բառե՛ր գրիր տողերի վրա:



**65.** Տրված արմատներով երկուական բա՛ռ կազմիր:

*Թագավոր*________________________________________

*կարգ*___________________________________________

*միրգ*___________________________________________

*ձիգ*____________________________________________

*ճիգ*____________________________________________

**66.** Գրի՛ր տրված բառերի հոմանիշները՝ լրացնելով համապատասխան վանդակները.

*զարդարել* - □□գ□□

*ցանք* - □□գ

*շարք* - □□□գ

*զգեստ* - □□գ□□□

*բաշել* - □գ□□

*շահ* - □գ□□

**67.** Յուրաքանչյուր շարքում 1 բառ ավելորդ է, այն դուրս թողնելով՝ հոմանիշները գրի՛ր համապատասխան վանդակներում:

*Թագավոր - արքա, կայսր, ազնվական:*

*Մեգ - մառախուղ, մշուշ, մթնշաղ:*

*Օգնել - աջակցել, խոչընդոտել, օժանդակել:*

*Փափագել - ցանկանալ, ընծայել, տենչալ:*

**թագավոր**

□

□

**մեգ**

□

□

*օգնել*

**[illegible]**

□

□

**68.** Տրված բառակապակցությունների դիմաց գրի՛ր համապատասխան բառերը, իսկ նկարների տակ՝ համապատասխան համարաթիվը:



① *փայտ տաշելու գործիք՝ սուր մասը գործածողի կողմը* ____________

② *մեխը բռնելու և հանելու գործիք* ____________

③ *գծագրական գործիք* ____________

④ *փայտե կարճ կոթով կեռ, սրաբերան գործիք, որով հացահատիկ կամ խոտ են հնձում* ____________

**69.** Ըստ գույների՝ բառերը սլաքներով միացրո՛ւ իմաստներին.

| | |
|---|---|
| *տեգր* | *ապագան գուշակող մարդ* |
| *հրաձիգ* | *տեքստը մի լեզվից մյուսը դարձնող մարդ՝ մասնագետ* |
| *մարգարե* | *ամառանոց եկած մարդ* |
| *հովեկ* | *ամուսնու եղբայրը* |
| *թարգմանիչ* | *հրազենից կրակող մարդ* |

**70.** Յուրաքանչյուր բառի համար գրի՛ր այն հոմանիշը, որն ունի **գ**, **կ** կամ **ք**.

*լուսաբաց* ____________

*խրախուսել* ____________

*հեղինակազրկել* ____________

*գիրկ* ____________

*նվեր* ____________

**71.** Նկարների հիման վրա լրացրո՛ւ խաչբառը:




**72.** ա) Բաց թողնված տեղերում գրի՛ր **դ**, **տ** կամ **թ**:

*Որոգայ__, խորդուբոր__, խլուր__, թփու__, ադաման__, ճկույ__, խախու__, կիր__, լուր__, վար__, անզար__, թակար__, անհար__:*

բ) Բառերի մեջ հոմանիշների 2 զույգ կա. գտի՛ր և գրի՛ր դեմ դիմաց:

- ____________________________
- ____________________________

**73.** Շրջանակների մեջ գրի՛ր, թե ինչո՛վ բրդուճներ կարելի է պատրաստել:



**74.** Տրված արմատներով բառե՛ր կազմիր.

*օղ* ______________________________

*բարդ* ______________________________

*նյարդ* ______________________________

*մարդ* ______________________________

**75.** Տրված բառերի կողքին գրի՛ր իմաստով մոտ բառեր՝ ընտրելով բառերի պարկից: Ընդգծի՛ր **դ** և **թ** տառերը:



*ուրախ* ______________________________

*վարար* ______________________________

*անհարթ* ______________________________

*կապույտ* ______________________________

*ժամանակակից* ______________________________

*զուգել* ______________________________

*անհապաղ* ______________________________

**76.** ա) Լրացրո՛ւ բաց թողնված տառերը: Ո՞ր շարքի բոլոր բառերում է բաց թողնված տեղում **դ** գրվում: Ճիշտ պատասխանի շրջանակը ներկի՛ր:

O *Վար_ուհի, լուր_, օ_ևան*

O *խորաման_, զվար-, խոր_ուբոր_*

O *արդուզար_, խոր_անալ, խր_ին*

O *ար_ուկ, դ_ում, լաչվար_*

բ) Գրի՛ր այն բառերը, որոնք **թ**-ով են գրվում:

______________________________

______________________________

**77.** Ընտրի՛ր այն 5 բառերը, որոնցում ր-ից և ձայնավորից հետո **բ**, **գ**, **դ** բաղաձայնների արտասանությունը համապատասխանում է գրությանը: Ընտրածդ բառերի համարաթվերը լրացրո՛ւ տրված վանդակների մեջ:

1. *Համբուրել*, 2. *հոգի*, 3. *բարբարոս*, 4. *վարդենի*, 5. *օդանավ*, 6. *դդում*, 9. *կարգապահ*, 10. *մարդկային*, 11. *անհագ*, 12. *մակարդակ*:

**78.** Բառակապակցության յուրաքանչյուր բառից մեկ բաղադրիչ վերցնելով՝ նոր բա՛ռ ստացիր.

*կանաչով ծածկված* ____________________

*ձյունով պատված* ____________________

*մրցույթը վարող* ____________________

*արծաթով օծված* ____________________

*լույս արձակող* ____________________

**79.** ա) Լրացրո՛ւ բաց թողնված տառերը: Ո՞ր շարքի բոլոր բառերում է բաց թողնված տեղում **ձ** գրվում: Ճիշտ պատասխանի շրջանակը ներկի՛ր:

O *համար__ակություն, հար__ակում, շրջադար__*

O *ապաղ__ագործ, խ__կել, ձվա__եղ*

O *վերադար__, կոր__նել, ար__ունք*

O *ար__ակուրդ, հինավուր__, վար__ույթ*

բ) Գրի՛ր այն բառերը, որոնք ց-ով են գրվում:

____________________

____________________

**80.** Բառակապակցությունների դիմաց գրի՛ր համապատասխան բառը՝ ընտրելով բառերի արկղիկից.

*դասերից կամ աշխատանքից ազատ ժամանակահատվածը* ____________________

*մարզադաշտին կից այն սենյակը, որտեղ հանում են հագուստները* ____________________

*քաղաքի ծայրամասը կամ մոտակա բնակավայրը* ____________________

*հեքիաթ պատմող մարդ* ____________________

*փայտագործ արհեստավոր* ____________________

*մականուն, որով երբեմն հանդես են գալիս գրողները, հետախույզները և ուրիշներ* ____________________




**81.** Սլաքներով իրա՛ր միացրու հոմանիշ բառերը.

| | |
|---|---|
| *համարձակ* | *արտասուք* |
| *ցնծություն* | *արահետ* |
| *արցունք* | *հրճվանք* |
| *հինավուրց* | *արու* |
| *որձ* | *վաղեմի* |
| *ատաղձագործ* | *խիզախ* |
| *կածան* | *հյուսն* |

**82.** Յուրաքանչյուր նկարի տակ գրի՛ր, թե ի՛նչ է պատկերված: Կարմի՛ր ներկիր այն բառերի շրջանակները, որոնց արտասանությունը տարբերվում է գրությունից:









**83.** Ընդգծի՛ր այն 5 բառերը, որոնց մեջ ջ-ն հնչում է չ:

*Բջնի, առաջնորդ, անուրջ, ոջիլ, վերջալույս, աջակողմյան, մարջան, արջաբույն, դաջված, նարնջագույն, իջնել:*

**84.** Բառաշղթայից ըստ գույների գտի՛ր համապատասխան բառը և գրի՛ր բառակապակցության դիմաց:

*հրշեջանուրջբրջոցվայրէջքմարջանքաջք*

*խոնավ վիրակապ կամ լաթ* ____________

*օդանավի վայր իջնելը* ____________

*հրդեհը հանգցնող (մարդ կամ մեքենա)* ____________

*կարմիր գույնի թանկարժեք քար* ____________

*առասպելական ոգի, դև* ____________

*հաճելի, քաղցր երազ* ____________

**85.** ա) Նկարների հիման վրա լրացրո՛ւ խաչբառը:



բ) Փոքրիկ հեքիաթ կամ առակ հորինի՛ր՝ հերոսներ դարձնելով խաչբառի կենդանիներին:

**86.** Կարդա՛, այնուհետև վերնագրի տեղում լրացրո՛ւ կենդանու անունը: Այդ կենդանու մասին մի քանի տեղեկություն էլ դո՛ւ ավելացրու: Նկարի՛ր տետրիդ ազատ մասում:

---------------------------

*Անտառում ես ամենաուժեղն եմ: Շրջում եմ իմ փիրույքներով, ուտում հատապտուղներ, արմատներ, քանդում մրջնաբները, ձուկ որսում գետում: Չեմ սիրում, երբ ուրիշիս ինձ անհանգստացնում են. այդ դեպքում ես խիստ զայրանում եմ: Եթե կանգնեմ ամբողջ հասակով, ապա մարդուց էլ բարձր կլինեմ:*

*Ձմռանը քնում եմ իմ որջում և այդպես քնի մեջ մնում մինչև գարուն:*

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

**87.** Տրված բառերի հականիշներով լրացրո՛ւ խաչբառը:

1 առաջին

2 վախկոտ

3 նախորդ

4 նախաբան

5 չափ

6 դժբախտ



**88.** Յուրաքանչյուր բառի դիմաց գրի՛ր նրա հետ կապ ունեցող մեկ այլ բառ: Ասա՛, թե ինչո՛ւ հենց այդ բառն ընտրեցիր:

*Հաղարջ* ______________________
*գրիչ* ______________________
*էջ* ______________________
*ողջ* ______________________
*կամուրջ* ______________________

**89.** ա) Լրացրո՛ւ բաց թողնված տառերը: Ո՞ր շարքի բոլոր բառերում է բաց թողնված տեղում ջ գրվում: Ճիշտ պատասխանի շրջանակը ներկի՛ր:

O *փու__, հաղար__ենի, որ__*
O *գի__ում, բրդու__, գեղ__*
O *առ__և, մի__և, մին__և*
O *գղ__ալ, թր__ել, է__միածին*

բ) Գրի՛ր այն բառերը, որոնք չ-ով են գրվում:

______________________________________________

______________________________________________

**90.** Յուրաքանչյուր բառի քառակուսին ներկի՛ր համապատասխան գույնով:

| | | |
|---|---|---|
| *կակաչ* | *լաջվարդ* | *արջ* |
| *ջուր* | *հաղարջ* | *դարչին* |

**91.** Կարդա՛ ավանդազրույցը: Քո բնակավայրի, նրա մոտով հոսող գետի, մերձակա լճի կամ լեռան մասին նման մի պատմություն էլ դո՛ւ շարադրիր:



*Գորիսից վեր՝ սարերի մեջ է գտնվում Սև լիճը: Սև լճի ջրի կեսը ժամանակին խմել է մի սհարկու վիշապ, որը քառասուն գլուխ ուներ: Ազահաբար խմել է, հետո պառկել, հանգստացել, որ մյուս կեսն էլ խմի, լիճը ցամաքեցնի:*

*Այդ ժամանակ Աստծու հրամանով սարերը մոտեցել են իրար, վերցրել են լիճը, բարձրացրել, հասցրել մինչև երկինք և ազատել վիշապից: Վիշապն այլևս չի կարողացել վեր բարձրանալ. ծարավից ճաքճքել, տրաքել ու ցրիվ է եկել:*

**92.** Լրացրո՛ւ բաց թողնված տառերը և երկհնչյունները:

*Դեղ_ենու հո_ին լի էր անսահման սիրով, որ պիտի նվիրեր իր ա_ժանավոր ասպետին: Ասպետն ա_պայման գալու էր: Եվ սպասվա_ օրը չուշացավ: Բոլոր ծառերը սպիտակ հանդեր_ներով էին. միայն Դեղ_ենին էր վար_ագույն հա_ել :*

*Ասպետը պա_պաչուն աղ_յուր-առվակն էր: Նա բչբչալով ու անուշ կարկաչ_նով իջավ կանաչազար_ սարից ու հեր_ով մոտե-*



*ցավ ս_նված ծառերին: Առվակն անմիջապես զգա_ Դեղ_ենու սերն իր նկատմամբ, փարվեց ու ավելի շատ _ղողեց նրան:*

*Դեղ_ենին իր մե_ առավ խոխոջ_ն առվակի սառն_րակ ջուրը, լցրե_ իր արմատների, ճ___ղերի, տեր_ների և ամենից շատ` իր գեղեցիկ պտուղների մեջ:*

*Ահա թե ինչու է դեղ_ն այդպես ջրալի ու քաղ_րահամ:*

*(ըստ Սիրանուշ Բուլաքյանի)*

**93.** Ընտրի՛ր այն 5 բառերը, որոնցում ր-ից և ձայնավորից հետո բ, գ, դ, ձ, ջ բաղաձայնների արտասանությունը համապատասխանում է գրությանը: Ընտրած բառերի համարները լրացրո՛ւ վանդակների մեջ:

1. *արջամուկ,* 2. *օդամուղ,* 3. *հոգի,* 4. *հարդ,* 5. *հարբել,* 6. *վարդապետ,* 9. *արբանյակ,* 10. *ոգևորել,* 11. *մարգագետին,* 12. *բարձ,* 13. *մարջան,* 14. *որձ,* 15. *օձիք:*

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |

**94.** Մի երկխոսությո՛ւն հորինիր` գործածելով կեսօր, հեքիաթ, շաբաթ, երբ, անգամ բառերը:

*Հայկը* ______________________________

*Արևիկ* ______________________________

**95.** ա) Լրացրո՛ւ ղ կամ խ: Ո՞ր շարքի բոլոր բառերում է ղ գրվում: Ճիշտ պատասխանի շրջանակը ներկի՛ր:

O *հա_թանակ, շ_թա, շա_կապ, ապերա_տ*

O *մե_ք, բո_կ, փա_չել, քա_ցր, ա_բյուր*

O *դե_ձենի, մա_թել, ե_բայր, մե_ք*

բ) Գրի՛ր այն բառերը, որոնք խ-ով է գրվում:

---

**96.** Լրացրո՛ւ խ կամ ղ տառերը, բառերը գրի՛ր համապատասխան սյունակում:

*Ու_տագնացություն, ու_տապան, վա_ճան, վա_կոտ, տա_տակ, տա_տկալի «ձանձրալի», դա_ձ, դե_ձանիկ, թու_թ, թու_պ, խա_տել, խե_դել, կո_պեք, կմա_ք:*

| *ղ-ով գրվող բառեր* | *խ-ով գրվող բառեր* |
|---|---|
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |

**97.** Լրացրո՛ւ բաց թողնված ղ-ն կամ խ-ն: Ո՞ր շարքի բոլոր բառերում է խ գրվում: Ճիշտ պատասխանի շրջանակը ներկի՛ր:

O *թ_կի, դրա_տ, կե_տոտել, պանդու_տ*

O *զմրու_տ, կ_տար, դժո_ք, թա_տ*

O *ապու_տ, պ_տոր, նա_կին, սանդու_ք*

**98.** Յուրաքանչյուր նկարի դիմաց գրի՛ր համապատասխան բառը, ընդգծի՛ր ղ կամ խ տառերը: Այդ բառերը գործածի՛ր առանձին նախադասությունների մեջ:











**99.** Ըստ գույների՝ բառերը սլաքներով միացրո՛ւ իմաստներին:

| | |
|---|---|
| *Վառ կանաչ գույնի թանկագին քար* | *ուխտավոր* |
| *դաշինքը՝ երդումը խախտող* | *զմրուխտ* |
| *որևէ սրբավայր ուխտի գնացած մարդ* | *ուխտադրուժ* |
| *հիվանդությունը որոշել* | *ախտահանել* |
| *մանրէները ոչնչացնել* | *ախտորոշել* |

**100.** Բառերի պարկից գտի՛ր համապատասխան բառը և գրի՛ր իր իմաստի դիմաց: Այդ բառերը գործածի՛ր 1-ական նախադասության մեջ:



*արածի (կամ չարածի) համար ափսոսալ* ..............................................

______________________________

______________________________

______________________________

*սահմանված գինը իջեցնել* ..............................

______________________________

______________________________

*մեկին բարի ցանկություն հայտնել* ..............................................

______________________________

______________________________

*պարտության մատնել, կործանել* ..............................................

______________________________

______________________________

*շան վնգստալը ցավից, քաղցից* ..............................................

______________________________

______________________________

*որևէ բանի ճշտությունը մերժել* ..............................................

______________________________

______________________________

**101.** Ո՞ր շարքի բոլոր բառերում է ղ-ն խ արտասանվում: Ճիշտ պատասխանի շրջանակը ներկի՛ր:

- O *աղալ, սեղմ, եղյամ, ցնցուղ*
- O *փողք, փեղկ, քաղցր, կողք*
- O *աղմկալի, աղբյուր, աղջիկ, թղթակից*

**102.** ա) Գտի՛ր համապատասխան բառերը:




Ճիշտ բառերը գտնելու համար անջատի՛ր`

- ներշնչել *բառի առաջին բաղադրիչը.*
- արտաշնչել *բառի առաջին բաղադրիչը.*
- գաղթական *բառի արմատը.*
- սիրել *բայի վերջավորությունը:*

բ) Կազմած բառերը գործածի՛ր նախադասությունների մեջ:

________________________________________

________________________________________

**103.** Հոմանիշ բառերը սլաքներով իրա՛ր միացրու.

| | |
|---|---|
| *կեղծավոր* | *կեղտոտ* |
| *զթալ* | *ծուղակ* |
| *խաբեբա* | *շողոքորթ* |
| *աղտոտ* | *խղճալ* |
| *թակարդ* | *խարդախ* |

**104.** Յուրաքանչյուր շարքում 1 բառ ավելորդ է. այն դուրս թողնելով՝ հոմանիշները գրի՛ր համապատասխան վանդակներում:

**Աղքատ** - *չունևոր, չքավոր, չափավոր*

**Վախճան** - *վերջ, ելակետ, ավարտ*

**Խրախճանք** - *կերուխում, խնջույք, մաղթանք*

**Ապերախտ** – *խրոխտ, երախտամոռ, անշնորհակալ*

*աղքատ*

*վախճան*

*խրախճանք*

[illegible]

**105.** Գրի՛ր տրված բառերի հականիշները (**ղ** կամ **խ** ունեն).

*քաջ* ______

*ուրախ* ______

*պարտվել* ______

*հարուստ* ______

*դրախտ* ______

*զուլալ* ______

**106.** ա) Տրված բաղադրիչները միացնելով՝ բա՛ռ կազմիր:

Նմուշ՝ *աղյուս + (-ակ) = աղյուսակ:*

*ծաղիկ (-անոց)* ______

*աշխույժ (-ություն)* ______

*բուխս (-կան)* ______

*պանդուխտ (-ություն)* ________________

*դեղին (-ուց)* ________________

*խեղճ (-ուկ)* ________________

բ) Կազմած բառերից երկուսը գործածի՛ր նախադասությունների մեջ:

________________________________________

________________________________________

________________________________________

________________________________________

**107.** Ըստ գույների իրա՛ր մոտեցրու ածանցներն ու համապատասխան բառերը: Այդ բառերի արմատներն օգտագործելով՝ բա՛ռ կազմիր:

Նմուշ՝ Ապ և երախտ*իք «բարի գործ, լավություն»* = ապերախտ:

| | | |
|---|---|---|
| *ան-* | *գաղթական* | ________ |
| *դժ-* | *գեղեցիկ* | ________ |
| *արտ-* | *բանակ* | ________ |
| *նախ-* | *բախտավոր* | ________ |
| *տ-* | *վախենալ* | ________ |

**108.** Դեմ դիմաց գրված շարքերից մեկական բաղադրի՛չ ընտրիր և իրար միացնելով՝ բա՛ռ կազմիր.

| | | |
|---|---|---|
| *ծաղիկ* | *հեր* | ________ |
| *թուխ* | *զարդ* | ________ |
| *թուղթ* | *պահ* | ________ |
| *գաղտնի* | *վայր* | ________ |
| *դրախտ* | *դրամ* | ________ |

**109.** Նկարների հիման վրա լրացրո՛ւ խաչբառը: Բառերն ընտրի՛ր տրվածներից:

[illegible]






**110.** ա) Լրացրո՛ւ բաց թողնված ն-ն կամ մ-ն: Ո՞ր շարքի բոլոր բառերում է **մ** գրվում: Ճիշտ պատասխանի շրջանակը ներկի՛ր:

- ○ *ա_բոխ, ա_բար, ա_բասիր*
- ○ *Սա_վել, Մա_վել, բա_բեր*
- ○ *ը_բռնել, ա_փոփել, ա_բասպանել*

բ) Գրի՛ր այն բառերը, որոնց բաց թողնված տեղում **ն** է գրվում:

________________________________________________________

գ) Ն-ով գրվող բառերը գործածի՛ր առանձին նախադասությունների մեջ:

________________________________________________________

________________________________________________________

________________________________________________________

**111.** Ըստ գույների կարդա՛ բառակապակցությունները և գրի՛ առ:

[illegible] | *ապարանք* | [redacted]

[redacted] | [illegible] | [redacted]

*անբարբառ* | *բեղուն* | *անբոխ* | [illegible]

*ժողովուրդ*

[redacted] | [redacted] | [redacted]

**112.** ա) Լրացրո՛ւ բաց թողնված վ-ն կամ ֆ-ն: Ո՞ր շարքի բոլոր բառերում է վ գրվում: Ճիշտ պատասխանի շրջանակը ներկի՛ր:

O *աս_ալտապատել, նա_թամուղ, ա_տոմեքենա*

O *հարա_ային, հո_տաշուշան, հա_ք*

O *Ա_ղանստան, գո_ք, հազի_հազ*

բ) Յուրաքանչյուր շարքից մեկ բա՛ռ ընտրիր և գործածի՛ր նախադասությունների մեջ:

______________________________________________

______________________________________________

______________________________________________

**113.** Նմուշին հետևելով՝ բառակապակցությունները կազմի՛ր:

**Նմուշ՝** *քաջություն / կռվել – քաջությամբ կռվել:*

*ա) ուրախություն / դիմավորել* ______________________

*բ) ուշադրություն / հետևել* ______________________

*գ) խորամանկություն / հաղթել* ______________________

*դ) ոգևորություն / սկսել* ______________________

**114.** Ո՞ր շարքի բոլոր բառերում է վ-ն ֆ արտասանվում: Ճիշտ պատասխանի շրջանակը ներկի՛ր:

O *գովք, փլավ, հեծանիվ*

O *նավթամուղ, հարավային, ավտոմեքենա*

O *թավշյա, հազիվհազ, թովել*

**115.** Յուրաքանչյուր նկարի դիմաց գրի՛ր համապատասխան բառը, ընդգծի՛ր **վ** կամ **ֆ** տառերը: Այդ բառերը գործածի՛ր առանձին նախադասությունների մեջ:









**116.** ա) Լրացրո՛ւ բաց թողնված **ր**-ն կամ **ռ**-ն: Ո՞ր շարքի բոլոր բառերում է **ր** գրվում: Ճիշտ պատասխանի շրջանակը ներկի՛ր:

- O *հ_չակավոր, ո_նոց, ս_թս_թալ*
- O *ա_ժանավոր, հ_ճվանք, պա_կել*
- O *ա_ծիվ, ժխո_, թ_չել*
- O *կ_ծել, հու_թի, վերադա_ձ*

բ) Յուրաքանչյուր շարքում մեկ բայ կա, դո՛ւրս գրիր դրանք, ապա գործածի՛ր առանձին նախադասությունների մեջ:

**117.** Հոմանիշ բառերը սլաքներով իրա՛ր միացրու.

| | |
|---|---|
| *ուրախություն* | *գոռոզամիտ* |
| *զեփյուռ* | *զարշելի* |
| *մեծամիտ* | *հուռթի* |
| *փարթամ* | *հովիկ* |
| *զզվելի* | *հրճվանք* |

**118.** Անվանի՛ր մեկ բառով (ունեն ր կամ ռ).

*երեք կողմ ունեցող* ____________________

*զինվորի մետաղյա գլխարկ* ____________________

*ընտիր կերակուր, ուտեստ* ____________________

*անզուսպ, անշնորհք ծիծաղել* ____________________

**119.** Խաչբառը լրացրո՛ւ տրված բառերի հոմանիշներով (բոլորն էլ ր կամ ռ ունեն):

1 *ուրախանալ*

2 *խրթին դժվարհասանելի*




4 *թռվռալ*

3 *նշանավոր*

6 *վախենալ*

6 *ցավ, կսկիծ*

5 *զզվելի*

**120.** Յուրաքանչյուր նկարի դիմաց գրի՛ր համապատասխան բառը, ընդգծի՛ր **ր** կամ **ռ** տառերը: Այդ բառերը գործածի՛ր առանձին նախադասությունների մեջ:













**121.** Կարդա՛ հայկական ավանդազրույցը: Գրի՛ր մարդկանց անուններ, որոնք նշանակում են՝

*ա) ծաղիկներ* ______________________________

______________________________

*բ) երկնային մարմիններ* ______________________________

______________________________

*գ) աշխարհագրական անուններ* ______________________________

______________________________

*դ) մարդկային հատկանիշներ* ______________________________

______________________________

### *Արև ու Լուսին*



*Արևն ու Լուսինը աստծու զավակներն են. Արևն աղջիկ է, Լուսինը՝ տղա: Հոր հրամանով նրանք պարտավորվում են գիշեր-ցերեկ հերթով հսկել աշխարհին: Քույր ու եղբայր վիճակ են գցում, թե գիշերն իրենցից ո՛վ հսկի: Վիճակն ընկնում է քրոջը՝ Արևին: Քույր ու եղբայր սկսում են տաք-տաք վիճել: Աղմուկի վրա գալիս է հայրը: Երբ իմանում է պատճառը, նախատում է Լուսնին և հրամայում, որ նա՛ գիշերները հսկի:*

*Լուսինը հանձն է առնում կատարել հոր կամքը: Ապա հայրը դիմում է աղջկան՝ առաջարկելով ցերեկները հսկել: Արևն առարկում է՝ ասելով, որ ինքն ամաչում է օրը ցերեկով մարդկանց աչքին երևալուց:*

*- Այդ դեպքում,- ասում է հայրը,- ձեռքերիդ մեջ մի-մի խուրձ ասե՛ղ բռնիր. ով կհամարձակվի քեզ նայել, ասեղներով ծակի՛ր աչքերը:*

*Արևը համաձայնվում է և այդ օրվանից սկսած՝ կատարում հոր կամքը:*

**122.** Կարդա՛ և ուշադի՛ր եղիր շրջակա միջավայրի նկատմամբ: Գրի՛ր, թե ուրիշ ի՞նչ գիտես ծաղիկների մասին:

*Դեռևս հին ժամանակներում մարդը ձգտել է իմանալ օրվա ժամը: Ժամանակը որոշելու համար նա դիմել է տարբեր միջոցների: Այդ հարցում նրան օգնել են արևը, աստղերը, լուսինը, աստղազարդ երկինքը և այլն:*



*Հետաքրքրական են «ծաղկային ժամացույցները»: Բնության գրկում կարելի է օգտվել դրանցից, եթե ստույգ իմանանք, թե այս կամ այն ծաղիկը առավոտյան ո՞ր ժամին է բացվում և երեկոյան ե՞րբ է փակվում:*

*Ծաղիկների պսակները բացվում և փակվում են որոշակի ժամերի, ուստի նրանց միջոց մոտավոր ճշտությամբ կարելի է իմանալ ժամանակը:*





*Այսպես, մասուրի ծաղիկները բացվում են առավոտյան ժամը 4-5-ին, իսկ փակվում են երեկոյան 7-8-ին: Կակաչը բացվում է ժամը 5-ին, փակվում է ցերեկվա ժամը 3-ին: Խատուտիկը բացվում է 5-6-ին, փակվում է ցերեկը ժամը 2-3-ին: Մանուշակը բացվում է առավոտյան 7-8-ին, փակվում է 5-6-ի կողմերը:*

**123.** ա) Հայկական ժողովրդական հեքիաթի պարբերությունները խառնված են: Վերականգնի՛ր տեքստի խախտված տրամաբանությունը. ճիշտ հերթականությամբ համարաթվերը լրացրու՛ վանդակներում:

☐ *Արտը հասնում է, դեղնում, ոսկու պես: Գյուղացին արտի կողքին կանգնում և ուրախացած ասում է.«Ինչքան ընկեր ունեմ, էգուց հավաքեմ բերեմ՝ հնձեն»:*

☐ *Արտի տերը խնդրում է բարեկամներին, բայց սրանք էլ տեղից չեն շարժվում: Օրն անցնում է, արտը մնում է հնձելու: Գյուղացին գալիս տեսնում է՝ արտը ձեռքից գնում է, հասկերը կոտրատվում են:*

☐ *Արտի տերը գնում է, ընկերներին կանչում, բայց սրանցից ամեն մեկն իր գործին է գնում: Արտը մնում է հնձելու: Հասկը սմքում է, ոսկու ցոլքն էլ արտից գնում է: Արտի տերը նայում ու ասում է. «Էսպես չի լինի. գնամ հարևաններիս հավաքեմ, բերեմ՝ հնձեն»: Լորիկները նորից լսում ու մորը պատմում են: Մայր լորիկն ասում է. «Լաց մի՛ եղեք. արտը չի հնձվի»:*

☐ *Արտի կողքին կանգնում, ասում է. «Չեղավ, գնամ կնոջս ու երեխաներիս բերեմ, ձեռքով քաղեմ»: Ճտերը լսում են մարդու ասածն ու հայտնում իրենց մորը: Լոր մայրիկն ասում է. «Ա՜յ, արդեն մեր գնալու ժամանակն է. արտը վաղը հնձելու են»:*

☐ *Մի մարդ մի կտոր արտ է ունենում: Այդ տարի հատիկն այնքա՜ն խոշոր, հասկն այնքա՜ն սիրուն է լինում, որ տերը նայում է, չի կշտանում: Ասեղ գցեիր, արտի երեսին կմնար, գետին չէր ընկնի:*

☐ *Արտում մի լորի բույն է լինում՝ ձագերը մեջը: Մայրիկը կերը կտուցին գալիս է, ճտերը լուր են տալիս. «Արտի տերը վաղը ընկերներին բերելու է. էստեղից գնանք, թե չէ գերանդին մեզ կկտրտի»: Մայր լորիկն ասում է. «Որ հույսն ուրիշի վրա է դրել, հանգի՛ստ եղեք»:*

☐ *Մարդը գնում է, ընկերներին ու բարեկամներին օգնում, նրանց արտերը հնձում-կալսում, որ նրանք էլ գան, հետո իրեն օգնեն:*

*Պարբերությունների ճիշտ դասավորությունն է՝* ______________

բ) Հետևյալ առածներից ո՞րը կարող է կարդացածդ հեքիաթի վերնագիր դառնալ: Ընտրությունդ հիմնավորի՛ր:

*Արջը յոթ երգ գիտի, յոթն էլ մեղրի մասին է:*

*Մախաթը պարկում չես պահի:*

*Ամեն մարդ իր գլխարկը թող բռնի, որ չընկնի:*

*Քաղցր լեզուն օձը բնից կհանի:*

*Ամառվա փուշ, ձմեռվա նուշ:*

**124.** Կարդա՛ զրույցը: Փորձի՛ր նկարագրել հացի անցած ճամփան:

### *Հացի փշուրն ու հրեշտակը*



*Ասում են, թե հենց մի փշուր հաց է ընկնում գետինն, մեզ համար անտեսանելի մի հրեշտակ է իջնում երկնքից և մի ոտքով կանգնում հացի փշուրի վրա, որպեսզի այն ոտնատակ չընկնի, չպղծվի: Այնպես որ իմացե՛ք. գետինն ընկած հացի բոլոր փշուրների վրա մի-մի հրեշտակ է կանգնած: Եվ քանի որ մեկ ոտքի վրա կանգնելը դժվար ու հոգնեցուցիչ գործ է, մարդիկ պետք է օգնության շտապեն հրեշտակներին. հացը գետնից վերցնեն և մի բարձր տեղ դնեն:*

*Հացը գետին գցելը մեղք է, քանի որ այն թոնիր է մտել, մաքրվել, սրբացել:*

# ՄԱՅՐԵՆԻ

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐ 1

## 5-րդ դասարան

Հեղինակ՝ **Դավիթ Գյուրջինյան**

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Գևորգյանի

Ծավալը՝ 3.5 տպագրական մամուլ:
Տպագրությունը՝ օֆսեթ:

**ԷԴԻԹ ՊՐԻՆՏ**
Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

Երևան 2012

Աշխատանքային տետրի նկատմամբ բոլոր իրավունքները գտնվում են հրատարակչության պահպանության ներքո: Սույն հրատարակությունը չի կարող վերահրատարակվել կամ բազմացվել այլ եղանակներով, առանց հրատարակչության և հեղինակների գրավոր համաձայնության: